ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

21.11.2014 11:47

ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրեն Սիմոն Բաբայանը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հանդիպել է Արցախի պետական համալսարանի ռեկտոր Մանուշ Մինասյանին և նույն բուհի իրավագիտության ֆակուլտետի ուսանողներին:

Այցի նպատակն էր ներկայացնել ՀՀ փաստաբանական դպրոցի՝ որպես քաղաքացիական հասարակության ինստիտուտի հնարավորությունները և առաքելությունը: Դպրոցի տնօրենը ռեկտորի և ուսանողների հետ քննարկել է ՀՀ-ում փաստաբանության առջև կանգնած մարտահրավերները և խնդիրները: Սիմոն Բաբայանը մասնավորապես ընդգծել է փաստաբանի դերն ու կարևորությունը մեր հասարակության մեջ և արագ փոփոխվող աշխարհում՝ նշելով, որ «յուրաքանչյուր իրավական հարցում փաստաբանի խորհուրդը կամ իրավական գիտելիքներին տիրապետումը կարող է հիմք հանդիսանալ անձին արդարացնելու կամ խնդրի լուծման իրավական ամենակարճ ճանապարհը ցույց տալու համար»:

Հանդիպման ընթացքում քննարկվել է նաև իրավաբանների մասնագիտական կողմնորոշման և փաստաբանի գործունեության մասին հիմնահարցերը, որտեղ կարևորվել է փաստաբանի դերը Արցախի պետականության կայացման գործում:

Սիմոն Բաբայանն ուսանողներին ներկայացրել է ԼՂՀ դիմորդների՝ ՀՀ փաստաբանական դպրոց ընդունելության հատուկ կարգը, որոնք են.

1. գործում է հեռավար ուսուցման կարգ
2. ազատված են ընդունելության քննության մասնակցության վճարից
3. ԼՂՀ դիմորդները վճարելու են ուսման վարձի 50 տոկոսը
4. Յուրաքանչյուր հոսքի ընդունելության ժամանակ տրամադրվում է անվճար 2 տեղ:



Առաջարկվող նորություններ

17.09.2013ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄՍՎԱ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

29.10.2013
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

06.10.2013ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ՀԱՄԱԼՐՎԵՑ ՆՈՐ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐՈՎ

30.09.2013«ՍՏՐԱՏԵԳԻԱՅԻ ԱՐՎԵՍՏԸ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })